Լույսի ջահակիրները

Բարին կամեցող մարդկանց շնորհիվ փոխվեց մեր առօրյան:

Բարև… Ես Աննան եմ: Սովորում եմ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Պատարայի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում:

Ներկայացնում եմ ԵՕ դպրոցի միջին օղակը: Ձեր շնորհիվ մենք առնչվեցինք մի նոր իրողության: Իրողություն, որը մեզ բերեց նոր հետաքրքրություններ:

Մեր առաջ իր դռները բացեց վերանորոգված և կահավորված երկու դասասենյակ, էլ չեմ խոսում համեղ և վիտամիններով հագեցած ճաշատեսակների մասին, որոնք պատրաստում են մեր խոհարարները՝ Ձեր ընձեռած հնարավորությունների շնորհիվ:

Ես անչափ ուրախ եմ, որ մասնակիցն եմ այդ ծրագրի: Փոքր սրտով, բայց մեծ ջերմությամբ իմ շնորհակալությունն եմ հայտնում Հայաստան Համահայկական հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնին: Դուք մեզ համար եղաք լույսի,հույսի արարման փարոս:

ԵՕ դպրոցի խմբերի աշակերտները միաբերան ասում են՝ շնորհակալություն:

Շնորհակալություն, բարի մարդիկ:

Ձեր Աննա